մին զաստուածայինն երկրորդեն զբան։

Ապա յայտ յայտցանէ է թէ՝ մանկութիւնն գեղաձիծաղ, հասակն անմեղ՝ ճշդիրիտ պատկեր է երջանկութեանն։ երջանկութեան՝ որում բազուկք ի մարդկանէ ցանկանալով ցանկան և փարիպքին, այլ ոչ կարեն հասանել այնպիսի։ զի որոնեն անդ՝ և յայնպիսի տեղիս՝ յորս անհնարին է գտանել։ Նա իբրև զհայելի՝ զնորհաց աստուածութեան զճառագայթս յինքն անդրադարձուցեալ ցոլացուցանէ։ Աստուած իսկ մանուկ լինելով փառաւորեաց ըզմեծութիւն և զնորհս անմեղ մանկութեան։ Նա սիրէր զմանկունս և օրհնէր զնոսա, վասն որոյ յանդիմանեաց իսկ զոմանս յաշակերտացն՝ որք ոչ թոյլ տային այնոցիկ յինքն մերձենալ. «Թոյլ տուք, ասէ, և մի արգելուք զդոսա գալ առ իս. զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»։ Եւ որ մեծն է, նա քան զամենայն հասակս մարդկան զմանկութիւնն գերազանց կացոյց, ասելովն թէ՝ «Որ ոչ դարձցի և եղիցի իբրեւ զմանուկ, ոչ կարէ մտանել յարքայութիւն երկնից»։

Ցնծա՛ արդ և ուրախացիր ո՛ մանկութիւն որ գիտես կամ յաջողեալ ելեալ պահել միշտ զայդ շնորհ գերազանց, զոր չեցեն շրջեալ հրապոյրք չար ընկերաց. զուարճացիր անտրտում բերկրանօք և յաւեժ երջանկութեամբ, քանզի ազատեն միտք ի չար խորհրդոց, հանդարտ է սիրտ ի յուզմանց չար կրից, երթ զհետ ցեռուն, որ կոչէ զքեզ սիրով և քաղցրութեամբ. զգոյշ լեր յամենայն առթից որք յապիշուակել ժպրհին զանմեղութիւն քո, եւ երանի է քեզ եթէ մահու չափ ճշնեալ մինչ ցվախճան պահել կարիցես զայդ պարգեւ աստուածատուր։

Պոլսոյ Յ. Զանազ—Գալէնի
Աշ. Փառ. Վարժարանի։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Տեղւոյս Սիքնէէի Հրէից Թախամագլուխը մի քանի տարի առաջ Ռուսաստան կ'երթայ և Սինակոկի մը շինութեան համար վեց հազար լիրայի չափ ստակ կը հաւաքէ. կը վերադառնայ և նոյն շինութիւնը կ'առնէ. երկրորդ անգամ եւս կերթայ առաջին շինութեան մնացորդը լրացնելու պատրուակաւ մօտ երեք հազար լիրա կը ժողովէ. այս տեղ կուգայ անձնական շէնք մի կը կառուցանէ իբր եկամուտ իւր շինած Սինակոկին։ Տեղս գտնուող Հրէայք, որք զանազան տէրութեանց հպատակ են, իմանալով գործուած նենգութիւնը, կը հեռագրեն Ռուսաստան և կըստուգեն Թախամագլուխին բերած ստակին քանակը. յետոյ կը բողոքեն Հիւպատոսաց և նոցա ազդեցութեամբ բանտարկել կը տան ներկայ ամսոյս մէջ կառավարութեան դուռը և ցարդ բանտն է։

— Բեթլեհէմի վերջին անցից առթիւ Տէրութեան կողմանէ Ցունաց Վանուց տեսուչը փոխուեցաւ և լուսածնուս նայելով պիտի փոխուին նոյնպէս Լատինաց Վանուց Տեսուչը, Թուտմանահարը և վարժապետը մի եւ նոյն առթիւ։

— Ամսոյս 22ին Բ. դռնէն եկած հեռագրոյն համաձայն տեղւոյս կառավարութիւնը Ցունաց Աւագ Թարգմանը բռնել տալով հազարապետին կը տայ. և նա մօտ երեսուն զինուորով Յոպէ կիջնէցնէ և անտի շոգենաւ դընելով ի Պոլիս կը տանին. տակաւին ասոր ստոյգ պատճառը չը գիտցուիր։

— 28ին Գեր. Կարապետ Ս. Եպիսկոպոսը Դամասկոս ղրկուեցաւ Ս. աթոռոյն կողմէն նոյն տեղւոյն ժողովրդեան հոգեւոր մխիթարութեան և մանաւանդ Նորաշէն Ս. Սարգիս Եկեղեցւոյ օծման համար։

digitised by A.R.A.R.@